ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

------ 2026 թվականի №-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի №333Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) «Վիվա Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն)՝ 15ԳՀց ռադիոհաճախականությունների տիրույթից ռադիոռելեային կապի գծերի կազմակերպման համար ռադիոհաճախականությունների 7 հատվածների օգտագործման թույլտվություն ստանալու վերաբերյալ 2026 թվականի մարտի 5-ի №MH/L260158/1.0/AA գրությունը,

բ) որ Ընկերության կողմից հայցվող 15ԳՀց ռադիոհաճախականությունների տիրույթը՝ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարի 2008 թվականի փետրվարի 28-ի «Հայաստանի Հանրապետության հաճախականությունների բաշխման աղյուսակը հաստատելու մասին» №71-Ն հրամանի համաձայն, նախատեսված է քաղաքացիական նշանակության ռադիոէլեկտրոնային միջոցների շահագործման համար, սակայն կարող է օգտագործվել նաև կառավարական նշանակության ռադիոէլեկտրոնային միջոցների կողմից՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետությունում ռադիոհաճախականությունների կառավարման համակարգող հանձնաժողովի հետ,

գ) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2011 թվականի ապրիլի 13-ի №169-Ն որոշմամբ հաստատված՝ ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների տրամադրման կարգի 20-րդ կետը, որի համաձայն, երբ հայտում նշված

ռադիոհաճախականությունները օգտագործվում են կամ նախատեսված են պետական (կառավարական) մարմինների ռադիոսարքավորումների օգտագործման համար, Հանձնաժողովն սկսում է համապատասխան մարմինների հետ համակարգման աշխատանքներ՝ ռադիոհաճախականությունների օգտագործման պայմաններում լրացուցիչ պայմաններ ամրագրելու նպատակով,

դ) Հայաստանի Հանրապետության պաշտպանության և Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություններին ուղղված Հանձնաժողովի 2026 թվականի մարտի 10-ի №ՄՄ/34.2-Ղ4-2/1326-2026 գրությունը, որին ի պատասխան՝ նախարարությունները համապատասխանաբար՝ 2026 թվականի մարտի 16-ի №ՊՆ/ՎԿՎ/3423-2026 գրությամբ և մարտի 31-ի №01/11.1/2275-2026 գրությամբ (կից ներկայացնելով Ընկերությանը ռադիոհաճախականությունների հատվածների օգտագործման թույլտվություն տրամադրելու մասով առարկություններ չունենալու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության դիրքորոշումը) հայտնել են, որ Ընկերության կողմից հայցվող ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվություն տրամադրելու հարցի վերաբերյալ առարկություններ չունեն, և

հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ, 34-րդ հոդվածները, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 13-ի №169-Ն որոշումը՝ Հանձնաժողովը որոշում է.

1. Հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 15-ի «Ղ-Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերությանը ռադիոհաճախականությունների հատվածների օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №333Ա որոշմամբ «Ղ-Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված և 2024 թվականի ապրիլի 5-ի №101-Ա որոշմամբ Ընկերության անվամբ վերաձևակերպված ռադիոհաճախականությունների օգտագործման №0039 թույլտվության պայմանները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի

Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
------- 2026 թ.